

անգամ Հալէպ և Երուսաղէմ կ'ըսէ թէ կը մնար Եդեսիա «չառ աղիկ կասարեալ առափնաւսիրութեանըն՝ տեսականաւ եւ գործնականաւ եւ զշատ ազգաց շեղու եւ զգիր զիտեղովն, բայց սակաւ մի մեծանունքեան ախտից ունեւով, որպէս . . . զԿեսարացիին» (Պարտաւանդ, էջ 370):

Ինչպէս կը տեսնուի Գր. վրգ. Կեսարացիի հակառակորդ Դարանաղցի չի կըրնար ուրանալ իր աշակերտներուն վրայ դրած առաքիւնի կեանքի դրոշմը, հակառակ անոր որ չի դադրիր միշտ չարախօսելէ, վերագրելով մեծամտութեան որ թերեւս իր տգիտութեան դէմ անոնց ցոյց տուած արհամարանքի արտայայտութիւնն է:

Գրիգոր Դարանաղցի թերեւս այս պատճառով է որ կը գգուէ Գրիգոր վրգ. Կեսարացին «գոռոզ» անուանով եւ «սսանուն Սողոմոն ի մեզ» բացատրութեամբ:

Ան սակայն չի կրնար ուրանալ բացարձակ անոր արժանիքները միշտ թունաւոր խօսքերու ընդմէջ:

Դարանաղցի ինքն կը յիշէ իբր աշակերտ Կեսարացիին Ազարիա «փիլիսոսիան» Տարօնցին կամ ըստ Սիմէոն դպիր Լեհացիի Սասունցին, որ իբր թէ իր վարժապետին «զազանարարու արևութեանն ոչ կա-